



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Նորագույն տեղեկատվական*

*տեխնոլոգիաների ազդեցությունը և*

*դերը սովորողի հոգեբանական*

*զարգացման գործում*

Առարկան՝

*Ինֆորմատիկա*

Հետազոտող ուսուցիչ՝ *Յողիկ Թաթոյան*

Ուսումնական հաստատություն՝ *«Ալավերդու Ե.Չարենցի անվան*

*թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

*Երևան 2022*

## Բովանդակություն

Ներածություն-----	3
Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը մարդկանց կյանքում-----	5
Հեռուստացույցի դերը մարդու կյանքում-----	7
Համակարգիչը , համացանցը և երեխան-----	14
Երեխան և համակարգչային խաղերը-----	20
Խորհուրդներ դեռահասներին և ծնողներին-----	23
Խորհուրդներ ծնողներին-----	25
Եզրակացություն-----	28
Գրականության ցանկ-----	29

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակներում առանց տեղեկատվական տեխնոլոգիաների, մեր օրերում աներևակայելի է առաջընթացը կրթության և հասարակական գործունեության ցանկացած բնագավառում: Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությունը դարձնելով մարդու կյանքի անբաժան մասը: Դրանք են թելադրում կյանքի ընթացքն ու ուղղորդում ճանապարհը:

Քաղաքական, տնտեսական, գեղագիտական, հոգեբանական, բարոյական, կրթական, հասարակական տեսանկյունից տեղեկատվական տեխնոլոգիաների թողած ազդեցության հետևանքները խորն են այնքանով, որ մարդկային կյանքի և հոգու ոչ մի անկյունը զերծ չի մնացել այդ ազդեցությունից: Այսօր ակնհայտ է, որ քաղաքակրթության հետագա զարգացումը կախված է նրանից, թե ինչպես կկառուցվեն մեղիայի և մարդու, մեղիայի և մշակույթի, մեղիայի և կրթության հարաբերությունները: Միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր լուծել այդ խնդիրները:

Ցավոք սրտի, համակարգիչը և հատկապես՝ համացանցը, աստիճանաբար մեկուսացնում են երեխաներին իրականությունից, տանում դեպի երևակայական, վիրտուալ աշխարհ: Երեխաները կարող են աստիճանաբար ընդհունել համացանցային կամ երևակայական աշխարհը որպես առաջնային, և կենսական խնդիրների լուծումները փնտրել իրականությունից կտրված եղանակներով:

Իմ հետազոտական աշխատանքում անրադարձ եմ կատարել մանկավարժական տեսանկյունից քննարկվող հետևյալ խնդրին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների առօրյա կյանքում:

Այսպիսով՝ մեր աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների հոգեվիճակի վրա, ինչպես նաև զետեղել նյութեր, որոնք կարող են օգնել ուսուցչին և ծնողին:

Ժամանակակից աշխարհում դժվար է գտնել մի երեխա, ով հետաքրքրված չէ համակարգչով: Հավանաբար նույնքան դժվար է գտնել ծնողի, ով չի անհանգստանում համակարգչային խաղերի նկատմամբ երեխայի չափից ավելի ոգևորությամբ: Իհարկե, համակարգիչները այժմ օգտագործվում են գիտության, տեխնիկայի և նույնիսկ արվեստի

տարբեր ոլորտներում, ուստի անհրաժեշտ է դարձել դրա հետ աշխատելու ունակությունը, որպեսզի երեխան հետագայում յուրացնի որևէ մասնագիտություն: Մինևույն ժամանակ, ժամերով մոնիտորի մոտ նստելով՝ երեխան ոչ միայն փչացնում է իր առողջությունը, այլև բաց է թողնում ընկերների հետ զրուցելու, սպորտով զբաղվելու, պարզապես բակում մաքուր օդով վազելու հնարավորությունը: Այսպիսով, ինչ պետք է անի իրավասու և հոգատար ծնողը. թույլատրել կամ արգելել շփվել՝ «մետաղական ընկերոջ» հետ:

Ցավոք սրտի, ինչպես բոլոր հիվանդությունների բուժումը չկա, այնպես էլ երեխաների դաստիարակության հետ կապված հարցերի համընդհանուր պատասխաններ չկան: Այսպիսով, եկեք փորձենք վերլուծել ամեն ինչ Համակարգչային հոբբիների «կողմ» և «դեմ», և նաև հաշվի առնել երեխայի անհատական առանձնահատկությունները և այն իրավիճակը, որում նա մեծանում է:

# Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը մարդկանց կյանքում

Հասարակությունների ընդլայնման ու մշակութային առաջադիմության հետ գուրընթաց, կապի միջոցները նույնպես կատարելագործվեցին, կյանքի եղանակները, մտքերն ու լուրերը փոխանակելու համար մարդկությանն ընձեռնեցին նոր հնարավորություններ: Այնպես որ մեծ թվով գիտնականներ, նկատի ունենալով տեղեկությունների, մտքերի ու մարդկային խոհերի փոխանակաման մեջ նորագույն տեխնոլոգիաների ակնառու դերը՝ ժամանակակից պատմական ժամանակաշրջանն անվանել են «Հաղորդակցության դարաշրջան»:

Ներկա դարաշրջանում, մարդկությունը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկվել նրա հասարակական կյանքը: Կապի միջոցները, համառակ նրա ակնկալիքներին չեզոք միջոցներ չեն:

Նորագույն տեխնոլոգիաները ամենաշատ ազդեցությունը թողել են մարդկային կյանքի վրա և նրա համար ստեղծել են նոր աշխարհ: Մեծ թվով հասարակագետներ խոստովանում են, որ հանրային լրատվամիջոցները մեծ ազդեցություն են թողնում ողջ հասարակության վրա: Քաղաքական, տնտեսական, գեղագիտական, հոգեբանական, բարոյական և հասարակական տեսանկյունից այդ երևույթի թողած ազդեցության հետևանքները խոր են այնքանով, որ մարդկային կյանքի և հոգու ոչ մի ասանկյունը գերծ չի մնացել այդ ազդեցությունից: Այդ լրատվամիջոցները մեծ դեր ունեն նոր սովորությունների ձևավորման, համաշխարհայցման, առդկային վարքի ու տրամադրության փոփոխության և մյուս ժողովուրդների հետ դրացիական հարաբերությունների սկսելու հարցերում:

Տեխնոլոգիաների ոլորտում համակարգչի մուտք գործելով, մարդկային կյանքը ավելի մեծ փոփոխությունների ենթարկվեց: Համացանցային հասարակությունը պատճառ է դարձել, որ համընդհանուրությունը և տեխնոլոգիական ցանցաշինությունը մուտք գործեն նաև ուսուցման ոլորտ:

Տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների հեղաշրջման հետևանքով հեղաշրջվել են նաև ուսուցողական, տնտեսական ու մշակութային ոլորտները և ստեղծվել է մի նոր աշխարհ: Ներկա դարաշրջանում տեղեկատվությունն ու հաղորդակցությունը համարվում են որպես երկու հիմնական տարեր: Ժամանակակից մարդը հարկ եղած տեղեկու

թյունները ձեռք բերելու համար անհրաժեշտ է համարում հաղորդակցվել ուրիշների հետ:

Մյուս կողմից ամեն մի տեխնոլոգիա, հիմնական և բազմակողմանի փոփոխություններ է առաջացնում հասարակական կյանքում: Հեռախոսն ու հեռուստացույցը վերջին գյուտերից 2 նմուշներ են, որ անհերքելի ազդեցություն են թողնում հասարակության անդամների կյանքի վրա: Մարդու կյանքում դրանց ներկայությունը դարձել է սովորական երևույթ այնքանով, որ հաճախ դասվում են միջավայրի բնական տարրերի շարքին: Համակարգիչը ևս մի այլ գյուտ է, որ համաշխարհային հաղորդակցական ցանցի՝ ինտերնետի շահավետ գործունեությունը շարունակվելու հարցում առավել բարձր հնարավորություններ ունի: Փաստորեն համացանցը նորագույն երևույթ է, որ դարձել է մարդկային կյանքի անբաժանելի մասնիկը:

Այժմ մենք ապրում ենք տեղեկության վրա հիմնված, հաղորդակցական կապերով օժտված ժամանակաշրջանում: Գոյատեվելու համար մեզ անհրաժեշտ են կապի միջոցներ ու հաղորդակցության տեխնոլոգիաներ: Մրցակցության կարողությունը, տնտեսականապահովությունը և ազատությունը, այսօր առավել քան երբևէ դարձել է միջազգայնորեն ընդունված սկզբունք՝ որևէ ժողովրդի հաջողությունը չափելու համար, և այդ տեխնոլոգիաներին հասանելի դառնալուց բացի, այդ կարգի հաջողության հասնելու կարևոր ազդակներից մեկը, դրանց օգտագործման գիելիքներին տիրապետելն է: Անշուշտ տեղեկատվական տեխնոլոգիաները, ողջ աշխարհում, թե՛ դրական, թե՛ բացասական առումով փոփոխության են ենթարկել մարդկային հարաբերությունները:

Անկասկած, մարդկային կյանքի պատմության ոչ մի ժամանակաշրջան տեղեկությունների փոխանակման տեսանկյունից այսքան արագ ու ընդարձակ չի եղել: Այդ պատճառով, ներկա ժամանակաշրջանի կարևորագույն յուրահատկություններից են համարվում տեղեկատվության արագությունը, ծավալն ու նրա մեծ նշանակությունը, որի պատճառով էլ ներկա ժամանակաշրջանը անվանել է տեղեկատվության պայթյունի ժամանակաշրջան:

Այսօր տեղեկատվության ընդարձակման գործընթացի լույսի ներքո, տեղեկությունները հասու են ոչ միայն որոշ կենտրոններում, այլև փակ դռներն ու անանցանելի պատերն էլ ի գործու չեն կանխել նրանց մուտքը: Մարդկանց շուրջ առկա բոլոր ձայնային ու լուսային ալիքները իրենց մեջ պարունակում են տեղեկություններ, որոնք անկախ մեր ցանկությունից մուտք են գործում ամեն տեղ: Արդի ժամանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների ամենատարածված տեսակներն են հեռուստացույց, համակարգիչ, հեռախոս:

# Հեռուստացույցի դերը մարդու կյանքում

## Հեռուստացույցը ուսուցողական հզոր գործիք

Բոլորիս ընտանիքներում իր պատվավոր տեղն է զբաղեցնում հեռուստացույցը՝ որպես մեր կենցաղի ամենօրյա ուղեկից: Այն կլանում է թե՛ մեծերին, թե՛ փոքրերին: Հաղորդումներ, ֆիլմեր, մուլտեր, տեսահոլովակներ, գովազդ... Հեռուստացույց դիտելը դարձել է այնքան հարազատ բան, որ մենք նույնիսկ կասկածի տակ չենք դնում նրա օգտակարությունն ու վնասակարությունը: Ինչպես երթևեկության մեջ կան կանոններ, որոնց անհրաժեշտ է հետևել մեր կյանքի ապահովության և անվտանգության համար, այնպես էլ հեռուստացույց դիտելիս կան մի շարք սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրառել երեխայի հոգեկան, ինչպես նաև ֆիզիկական առողջության պահպանման համար: Հեռուստատեսության առավելությունն այն է, որ նա «պատուհան է դեպի աշխարհ», դիտողին կապում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ինչ-որ իմաստով դարձնում է դրանց մասնակիցը: Նա ուղղորդում է մարդկանց գիտակցությունը երկրագնդի, ամբողջ մարդկության, մեր շուրջը կատարվող գլոբալ երևույթների վրա: Այդ իմաստով հեռուստատեսությունը կարող է մեծ ներդրում կատարել շատ խնդիրներ լուծելու և մեր հոգևոր հորիզոնն ընդլայնելու հարցում հասնել ցանկալի արդյունքի:

## Հեռուստացույցի բացասաբար ազդեցությունը կամ հեռուստացույցը

Գիտնականները վստահեցնում են, որ հեռուստացույցի առջև երկար նստելը վնասակար է երեխաների համար: Շատ երեխաներ իրենց օրն անցկացնում են էկրանի առջև ժամերով նստած: Դրա մասին ծնողները քաջատեղյակ են, սակայն ոչ մի կերպ չեն կարողանում իրենց երեխային «կտրել» հեռուստացույցից:

Այսօր հոգեբանները և գիտնականները միաձայն պնդում են, որ հեռուստացույցը առաջին հերթին ազդում է երեխայի զարգացող նյարդային համակարգի վրա, որն էլ անդրադառնում է երեխայի առողջության և վարքի վրա: Հեռուստացույցը ստեղծում է հիպնոտիկ մի դաշտ, որն էլ ստիպում է երեխաներին ժամերով գամվել էկրանին:

Երբ հեռուստացույցն անջատվում է, ուղեղի բետա ալիքները (արթնության ալիքները) իրենց տեղը զիջում են դանդաղ ալֆա ալիքներին (որոնք դիտվում են այն ժամանակ, երբ մարդը պատրաստվում է քնել): Դրա հետևանքով ուշադրությունը դառնում է ցրված, տեսողությունը և լսողությունը բթանում են, իջնում է ճանաչողական գործընթացների արագությունը: Հեռուստացույց շատ դիտելուց ակտիվանում է երեխայի աջ կիսագունդը, որը պատասխանատու է զգացմունքային ռեակցիաների համար: Հեռուստացույցը վատ է անդրադառնում երեխաների հոգեկան ներաշխարհի և վարքագծի վրա: Գիտնականները եկել են այն եզրակացության, որ ոչ միայն հեռուստացույց նայելն է վնասակար, այլև հեռուստացույցի՝ պարզապես միացրած վիճակում լինելը: Երեխան դրանից նյարդային է դառնում, կռվարար և ջղային, գայրացկոտ: Ամեն առիթով երեխան ոչ միայն լաց է լինում, այլև դադարում է լսել ծնողներին:

### **Հեռուստացույցը բացասաբար է ազդում երևակայության վրա**

Զգայարանների ֆիզիոլոգիայի մասնագետ Հորստ Պրենը գրում է. 'Հեռուստաեկրանի առջև 10-15 ժամ նստած երեխայի ուղեղը նման է անապատի: Այդ երեխաները տառապում են երևակայության լրիվ կորստով: Որոշ երեխաներ ընդունակ չեն նույնիսկ հիշողությամբ բաժակ նկարելու: Ժամանակի հետ այդ կորուստը անդառնալի է լինում: Պետք է հիշել, որ ժամանակ առ ժամանակ երեխաների համար բարձրաձայն կարդալը նրանց մեջ առաջացնում է ոչ միայն կարդալու ցանկություն, այլև զարգացնում է մտածողությունն ու երևակայությունը: Հեռուստացույցից հրաժարված երեխան ոչինչ չի կորցնում, այլ փրկում է վերը նշված հատկանիշների ձևավորման համար անհրաժեշտ ժամանակը: Եթե արդեն դա ձեռք է բերել, ուրեմն չի խանգարի, որ նա ժամանակ առ ժամանակ հեռուստացույց ևս նայի: Եթե մանկությունը հազեցած է եղել խաղերով ու շարժումներով, երաժշտությամբ ու երևակայությամբ, ներքին պատկերներով ու տպավորություններով, ծնողները կարող են հանգիստ լինել, որ նրանց երեխան կգտնի կյանքի իր սեփական ուղին:

Երկար հեռուստացույց դիտելուց երեխայի երևակայությունը սահմանափակվում է: Գերմանացի մանկաբույժ Պիտր Վինտերշտայնը ավելի քան 17 տարի ուսումնասիրել է 5-6 տարեկան երեխաներին և պարզել, որ որքան շատ է երեխան ժամանակ անցկացնում հեռուստացույցի առջև, այնքան քիչ դետալներ է օգտագործում նկարելիս, իսկ նկարված



կերպարներն արտահայտված չեն: Նրանց նկարած կերպարներն անհամաչափ են, նկարները՝ ավելի սխեմատիկ ու անկենդան:

5 և 6 տարեկան այն երեխաների նկարներն են ովքեր օրը 1 ժ.- ից ավել հեռուստացույց չեն դիտում:



Այն երեխաների նկարներն են, ովքեր հեռուստացույց դիտում են օրական 3 ժամ:



Խոսքի ուժը և հեռուստացույցի ազդեցությունը նրա վրա

Երեխան խոսել սովորում է առաջին հերթին ծնողներից: Բայց ծնողները հիմա շատ զբաղված են, խոսելու ժամանակ չունեն, այսինքն՝ իրար ասելու բան էլ չունեն: Մարդիկ կինոյում, համերգասրահներում, պարասրահներում, հեռուստացույցի կամ համակարգչի առջև լուռ են: Բացի այդ, միացրած հեռուստացույցի առկայությամբ տանը ծնողների շփումն է դժվարանում: Ծնողներն ավելի քիչ են հետևում երեխաներին, քիչ են շփվում նրանց հետ, ուրիշ պատճառով երեխան մտավոր զարգացում չի ունենում, ավելի ուշ է սկսում խոսել և ավելի վատ, քան իր հասակակիցները: 1996 թվականին երեխաների օգնության անգլիական կազմակերպությունը հայտնում է, որ Անգլիայում յուրաքանչյուր երրորդ երեխան խոսքի զարգացման խնդիր ունի: Բուլղարիայում կատարված նմանօրինակ հետազոտություններից պարզվել է, որ նախադպրոցականների 21-27 %-ը տառապում է խոսքի խանգարումներով: Դրա հիմնական պատճառը բժիշկները համարում են ընտանիքներում աճող լռությունը, որին նպաստող ամենաուժեղ գործոնը հեռուստատեսությունն է: Երեխայի ֆիզիկական ու հոգևոր ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է մարդ, որը կդառնա

բառի միջնորդը: Միայն այդ դեպքում բառը երեխայի ես-ը գերզգայական ոլորտից կուղեկցի դեպի զգայական ոլորտ: Միայն այդ ժամանակ բառը կարող է զգայական աշխարհից ազատել գերզգայական ուժերը, որոնք անհրաժեշտ են երեխային, մի կողմից՝ հոգու և մտքի, մյուս կողմից՝ հոգու և մարմնի միջև կապ հաստատելու համար:

Խանգարում է կենտրոնանալ, վատ ուսում, շփում:

Փոքր տարիքում երեխայի մեջ անընդհատ պահանջ է առաջանում կապ գտնելու առարկաների, պատկերների և երևույթների միջև, որը դրսևորվում է անընդհատ հարցեր տալով: Ավելի ուշ շրջանում երեխայի դատողությունը ավելի է խորանում, ձևավորելով վերլուծական դատողական, խոհական մտածողություն, որն էլ ձևավորում է բանականությունը: Դրա շնորհիվ մարդը կարողանում է բացահայտել իրական կյանքի ընդհանուր օրինաչափություններ: Սակայն երեխաների մեջ այդ հնարավորությունների զարգացումը 6-7 տարեկանում նվազում է, և, եթե այդ պահանջը չի լրացվում համապատասխան դաստիարակությամբ, ապա հասուն տարիքում ստեղծագործական ունակությունները զարգացած չեն լինում: Դրա երկրորդ փուլը սկսվում է

սեռահասունության շրջանում: Այդ փուլում ինտելեկտուալ ներուժը նույնպես կարող է կորչել, եթե դաստիարակությամբ ժամանակին չամրապնդվեն նոր ունակություններ: Արդյունքում, բնության ընձեռած որոշ մտային ունակություններն անվերադարձ կորչում են: 1994 թվականին գերմանական «Շպիգել» ամսագիրը թեստավորել է գերմանացիների ընդհանուր կրթական մակարդակը և ստացել է հետևյալ պատասխանը. «Որքան մարդը երկար է հեռուստացույց դիտում, այնքան խղճուկ են նրա գիտելիքները: Դա վերաբերում է բոլոր բնագավառներին, բացի սպորտից»: Ամերիկացի գիտնականները փորձել են բացահայտել հեռուստահաղորդումների ժամանակ մարդու օրգանիզմում կատարվող կենսաքիմիական, ներզատական, նյարդամկանային և զգայական գործընթացների բնույթը, ինչպես նաև կենտրոնական նյարդային համակարգում ընթացող փոփոխությունները: Մարդկային աչքը չնայած դրսևորում է լուսանկարչական ապարատի հատկանիշներ, սակայն տեսողության գործընթացին մասնակցում է աչքի ոչ միայն օպտիկական տարրը: Տեսողությունը ոչ թե պասիվ գործողություն է, որն ուղղակի ընկալում է արտաքին միջավայրի լուսային գրգիռները, այլ բարձրագույն աստիճանի ակտիվ գործընթաց է: Չնայած ինչ-որ բան դիտելիս մենք չենք գիտակցում մեր աչքերի արագ շարժումները, այդուհանդերձ, դրանք կապված են մեր ամբողջ մարմնի հետ: Հեռուստացույցի առջև աչքերի ակտիվությունը համարյա լրիվ ընկնում է: Հեռուստացույցի առջև նստածը ակնդետ նայում է էկրանին, քանի

որ աչքը շարժող մկանները անշարժ են: Նրանց քարացածությունը տարածվում է ամբողջ մարմնում, և նույնիսկ ամենաշարժուն երեխաները հեռուստացույցի առաջ նստում են անշարժ: Սակայն այստեղ խնդիրը ոչ թե մկանային պասիվությունն է, այլ մկանների նուդորդող կամային պասիվությունը: Այդ գործընթացը հարձակում է մարդու կամային ունակության վրա, որով պայմանավորված են նրա ինքնուրույնությունը, սեփական ակտիվությունը: Տեղի է ունենում ակտիվության նվազում, կամքի կանգ, այսինքն՝ անհատի դեգրադացիա: Հեռուստացույցի անշարժացնող ազդեցությունը արտահայտվում է նաև գլխուղեղի կեղևի ակտիվության վրա: Ռիսումնասիրությունները բացահայտել են, որ հեռուստացույցի առջև նստած և հիպնոսի վիճակում գտնվող մարդու էլեկտրաուղեղագրերը իրար շատ նման են:

Հեռուստացույցը ազդում է նաև երեխայի ուսման պրոցեսի վրա: Որքան վաղ հասակից է երեխան տարվում հեռուստացույցով, այնքան տուժում է առաջադիմությունը, քանի որ ծանրաբեռնվում են ուշադրությունը, լսողական եւ տեսողական համակարգերը: Երեխան պետք է միշտ ակտիվ շարժվի, ձեռք բերի նոր հմտություններ, նկարի, բռնի, կառուցի, իսկ հեռուստացույց նայելու ժամանակ երեխան պասիվ է, չի զարգանում: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ երեխաներն, ովքեր գրեթե չեն նայում հեռուստացույց, դատում, մտածում են ավելի ռացիոնալ և նրանց աշխարհընկալումն ավելի իրական է, քան հաճախ հեռուստացույց նայող երեխաներինը: Պարզվում է, որ հեռուստացույցի առաջ ավելորդ ժամանակահատված անցկացնելը ամեն առումով բացասաբար է ազդում երեխաների վրա: Այնուամենայնիվ երեխային չպետք է թույլ տալ 2 ժամից ավել հեռուստացույց դիտել, քանի որ այն վատ է անդրադառնում երեխայի զարգացման ու հասունացման վրա: Հեռուստացույցից կախվածությանը զուգահեռ մարդկանց մեջ վերանում է գիրք կարդալու ցանկությունը: Հետազոտությունները անհերքելիորեն ապացուցում են, որ կարդալու ունակությունը, կարդալու ցանկությունը և կարդալու սովորությունը համալիր ունակություններ են, որոնք ապահովում են երեխաների ու դեռահասների հոգեկան, սոցիալական ու ինտելեկտուալ զարգացումը: Մեծերի հեքիաթները լսած և վաղ տարիքում ընթերցանությամբ զբաղվող երեխաները ոչ միայն լավ են տիրապետում լեզվին, այլև ընդունակ են իրականությունը ճիշտ պատկերացնելու: Այլ կերպ ասած, ակտիվ ընթերցողը դառնում է նաև ակտիվ մտածող:

Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ ովքեր գիտակցաբար սահմանափակում են հեռուստադիտումները, ունեն ավելի բարձր կրթական մակարդակ:

Սակայն այդ գիտելիքները նրանք ոչ թե հեռուստատեսկրանից են ստացել, այլ ձեռք են բերել դպրոցում, գրքերից ու թերթերից, երաժշտությամբ զբաղվելով, ճանապարհորդելով, սպորտային մարզումներով և այլն: Խանգարվում է քունը, նպաստում է ճարպակալմանը, մեծանում է երեխաների շրջանում շաքարախտի առաջացման հավանակա նությունը:

Այն երեխաները, ովքեր չարաշահում են հեռուստացույց, համակարգիչ դիտելը, ավելի դժվար են քնում, գիշերները հաճախ են արթնանում, մոզավանջներ տեսնում: Այս բոլոր բարդությունները շարունակվում են նաև ավելի մեծ տարիքում: Երկար ժամանակ հեռուստացույցի առջև անշարժ գամված մնալով՝ երեխան աստիճանաբար սովորում է նստակյաց կյանքի, ինչն էլ նպաստում է գիրանալուն: Ամենաառաջին խանգարումը, որ դիտվում է հեռուստացույցի չարաշահելու դեպքում, քնի խանգարումն է, իսկ ոչ բավարար քունը նպաստում է մարսողության ոչ լիարժեք իրականացմանը: ԱՄՆ-ում կատարված հետազոտության արդյունքում պարզվել է, որ երեխաների գիրացումը ուղղակիորեն կապված է հեռուստացույցի առջև նրանց անցկացրած ժամերի հետ: Այսինքն՝ հեռուստացույցը ազդում է նաև դիտողների օրգանիզմի նյութափոխանակության վրա: Հետազոտվող բոլոր երեխաների մոտ հիմնական փոխանակությունը, նախնական՝ հանգիստ վիճակում գտնվելու տվյալի համեմատ, նվազում է 14 %-ով: Կարելի է հասկանալ, որ համապատասխանորեն դանդաղում են նյութափոխանակության գործընթացները նաև ուղեղում: Ուրեմն հեռուստատեսկրանը քնի և արթմնի սահմանային վիճակների է բերում ոչ միայն գիտակցությունը, այլև օրգանիզմի ամբողջ նյութափոխանակությունը: Հեռուստադիտման ժամանակ պուլսը դանդաղում է 10 %-ով, այսինքն՝ բուսեում յոթ հարվածով, կամ ժամում 420 հարվածով: Հեռուստացույցի կամ համակարգչի էկրանի առջև օրական ավելի քան 6 ժամ անցկացնող երեխաները ավելի հաճախ են բախվում 2-րդ տիպի դիաբետի հետ: Սա պարզվել է հետազոտությամբ, որի մասին հրապարակվել է ArchivesofDiseaseinChildhood ամսագրում:

Հետազոտողները պարզել են, որ ճարպային զանգվածի մակարդակը բարձր է եղել այն երեխաների մոտ, որոնք հայտնել են ամեն օր 3 ժամ հեռուստացույց դիտելու մասին: Նրանց մոտ բարձր էր նաև լեպտինի՝ հորմոնը, որը վերահսկում է ախորժակը, գլյուկոզայի և ինսուլինի նկատմամբ ռեզիստենտության մակարդակը: Այս կապը զգալիորեն պահպանվել է նաև այնպիսի գործոնները հաշվի առնելուց հետո, ինչպիսին են՝ ընտանիքի եկամուտը, ընտանեկան վիճակը, սեռական հասունացման ժամանակահատվածը և

Ֆիզիկական ակտիվության մակարդակը: «Մեր արդյունքները ցույց են տալիս, որ հեռուստացույց դիտելու ժամանակի կրճատումը կարող է օգտակար լինել վաղ տարիքում տղաների և աղջիկների շրջանում 2-րդ տիպի դիաբետի առաջացման հավանականության նվազման համար», - նշել են հետազոտողները:

Նպաստում է ագրեսիայի, բռնության առաջացմանը Երեխաների հոգեկան կառուցվածքի վրա ազդում է ռեժիսորների նորամուծությունները՝ դաժանությունը, արյունը, որը անընդհատ հոսում է հեռուստաէկրաններից, սպանությունները: Այս ամենը ձևավորում է անբնական վերաբերմունք մահի հանդեպ: Նույնը կարելի է ասել սեռերի միջև հարաբերություններին, որոնք նույնպես կրկնօրինակվում են հեռուստահերոսներից:

Վերջին 20 տարիների ընթացքում ԱՄՆ-ում ուսումնասիրություններ են կատարվել հեռուստացույցի չարաշահման և հանցագործության քանակի ավելացման միջև եղած կապը պարզելու համար: Ազդեցությունն առավել ակնհայտ է թրիլեր և մարտաֆիլմեր սիրողների վրա: Էկրանում տեղի ունեցող ագրեսիան և բռնությունը ուղեղն ընկալում է որպես իրական, մենք տազնապ ենք ապրում, անվստահություն, վախ, իսկ ուղեղի համապատասխան կենտրոնները, ակտիվանալով՝ նպաստում են փախուստի և ագրեսիայի ակտիվացմանը: Երբ մարդը պարբերաբար նայում է դաժան սցենարներով ֆիլմեր, տեսարաններ, հուզական արձագանքները նման երևույթների նկատմամբ թուլանում են: Այսպես, երեխան աստիճանաբար սովորում է բռնությանը և սկսում է սառնասրտորեն այդ ամենը վերարտադրել: Հաճախ երեխաները դիմում են նմանատիպ քայլերի այն ժամանակ, երբ կարծում են, որ իրենց արարքը կմնա անպատիժ: Տարբեր երկրներում մի քանի տասնամյակ շարունակ կատարված հետազոտությունների հիման վրա գիտնականները և առողջապահության բնագավառի աշխատողները մեծամասամբ գալիս են այն եզրակացության, որ բռնություն դիտելը շատ վտանգավոր է երեխաների համար (Հենրի Կայդերի անվան ընտանեկան հիմնադրամ): Շատ հանցագործներ ասում են, որ իրենց վերաբերմունքն ու բռնի վարքը ձևավորվել են հեռուստացույցի ազդեցության ներքո: Սակայն մարդկանց կյանքի վրա շատ բան կարող է ազդեցություն ունենալ: Ագրեսիվ վարքին կարող են նպաստել համակարգչային բռնի խաղերը, ընկերների և ընտանիքի արժեքներն ու ընդհանուր կենսամակարդակը:

Ուստի զարմանալի չէ, որ հակառակ տեսակետներ գոյություն ունեն: Կանադացի մի հոգեբան գրել է. «Գիտական ապացույցները հստակ ցույց չեն տալիս, որ բռնություն դիտելը կա՛մ բռնություն է առաջ բերում մարդկանց մեջ, կա՛մ նրանց անզգա է դարձնում դրա

հանդեպ»: Սակայն լրատվության և հասարակության գործերով զբաղվող հոգեբանների ամերիկյան ընկերության կոմիտեն նշում է. «Ոչ մի կասկած չկա, որ մարդիկ որքան շատ են հեռուստատեսությամբ դիտում բռնություն, այնքան ավելի հանդուրժողական են դառնում ագրեսիվ վերաբերմունքի և վարքի հանդեպ»:

Դիտումն ու ընդօրինակումը ամենաարդյունավետ ուսուցման մեխանիզմներից են. այ դ պատճառով արժե լուրջ մտածել, թե մեր փոքրիկներն ինչ համակարգչային խաղեր են խաղում, ինչ մուլտֆիլմեր և հաղորդումներ են դիտում:

## Համակարգիչը , համացանցը և երեխան

### Համակարգչի դրական ազդեցությունները

Վերջին տարիներին համակարգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը: Համակարգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը՝ տնտեսության զարգացման տեսանկյունից, անշուշտ, դրական երևույթ է, սակայն համակարգչային տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և համակարգչային համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի բացասական ազդեցության երևույթների:

Համացանցն այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում, այլև այնտեղ արձարձվում և բարձրացվում են սոցիալալմշակութային բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը հաղորդում է դրանց նոր բովանդակություն: Համացանցը տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է ուսումնական և սոցիալացման տեսակետից: Համակարգիչը և բջջային հեռախոսը հնարավորություն են տալիս հաղթահարել մեկուսացումը և ձեռք բերել ընկերներ, խորհրդատվություն ստանալ մասնագետից առցանց (օնլայն) ֆորումների միջոցով, կիսվել սեփական փորձով և ստանալ օգնություն կամ խորհուրդ նմանատիպ խնդիրների հետ բախվող որևէ անձից:

Այսօրերեխան աշխարհը ճանաչում է համակարգչի միջոցով. խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ և այլն: Համացանցը և համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են: Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի, ինչուների պատասխանները կարող են գտնվել համացանց

ում: Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:

Նախ, ժամանակակից խաղային ծրագրերի շարքում կան շատ զարգացող:Այսպիսով, դեռահասների համար հարմար են մի շարք տրամաբանական խաղեր, որոնք զարգացնում են կանխատեսելու և վերլուծելու ունակությունը, հատկապես, եթե հաղթելու համար ձեռանհրաժեշտ է օգտագործել ձեր գիտելիքները որոշ առարկաներից: Նույնիսկ ամենաթերահավատ ծնողը դժվար թե կարողանա հերքել նման խաղերի դրական ազդեցությունը երեխայի զարգացման վրա:

Երկրորդ, նույնիսկ համակարգչի վրա սովորական գործունեությունը երեխայի կողմից ընկալվում է որպես խաղ: Ուստի այն, ինչ նրան ընդհանրապես չի հետաքրքրում դասագրքի էջերում, կարող է գրավիչ լինել մոնիտորի էկրանին: Սա կարող է օգտագործվել այն երեխաներին սովորեցնելու համար, ովքեր չեն ձևավորվել պատշաճ ճանաչողական մոտիվացիա: Ավելին, թույլ հիշողություն ունեցող ուսանողների համար համակարգչի միջոցով նյութի ուսումնասիրությունը կարող է ավելի արդյունավետ լինել: Մրաբացատրությունը պարզ է. Այն, ինչ վառ, դինամիկ, անսպասելի է թվում, անմիջապես ուշադրություն է գրավում, իսկ հայացքը էկրանին պահելու համար երեխան ջանք գործադրելու կարիք չունի, այսինքն՝ նրա ուշադրությունն այս պահին ակամա է: Մինևույն ժամանակ, այն, ինչ տեսնում եք, հեշտությամբ հիշվում է, քանի որ ակամա գործում է զգացմունքային և փոխաբերական: Երեխաների մոտ զարգացած հիշողությունը սովորաբար ավելի լավ է, քան մեխանիկական և տրամաբանական:

Երրորդ, ինքնուրույն աշխատանք համակարգչի մոտ նպաստում է երեխայի զարգացմանը ձեռքի փոքր մկանները և ձեռքի-աչքի կոորդինացումը:Այլ կերպ ասած, սեղմելով ստեղնաշարի կոճակները և շարժելով մկնիկի կուրսորը էկրանի ճիշտ տեղում, ձեր երեխան վարժեցնում է նուրբ շարժիչ հմտությունները, ինչպես նաև սովորում է կապել իր ձեռքի շարժումները էկրանի վրա նկատվող արդյունքների հետ:

Չորրորդ՝ համակարգչային խաղերը նպաստում են զարգացմանը վերացական մտածողություն, երեխաները ընտելանում են այն փաստին, որ երբեմն խաղերում իրերն ու արարածները պատկերվում են բնօրինակից բոլորովին այլ կերպ կամ նույնիսկ նշում են սրբապատկերներով: Այսպիսով, նման խաղերի ժամանակ մարդու մոտ աստիճանաբար ձևավորվում է նշաններ և սիմվոլներ ընկալելու ունակություն, ինչի հիմքում ընկած է

վերացական մտածողությունը: Եվ սա բացարձակապես անհրաժեշտ է սխեմաները, հավասարումները հասկանալու համար. գրավոր բառեր - երբ անհրաժեշտ է դառնում վերացական մտածել՝ առանց հենվելու տվյալ առարկայի կոնկրետ պատկերի վրա:

Հինգերորդ, վիրտուալ աշխարհներով ճամփորդելը կարող է գործել որպես հոգում կուտակված վրդովմունքն ու ագրեսիան լիցքաթափելու միջոց, որը վտանգավոր չէ ուրիշների համար և հետևաբար կարող է ընդունելի լինել: Շատերը համակարգչային խաղերի բավականին կասկածելի արժանիք կհամարեն: Եվ նրանք մասամբ ճիշտ կլինեն: Վերջերս հեռուստատեսության և մոնիտորների ագրեսիայի և բռնության թեման արդարացիորեն անհանգստացնում է ծնողներին, հոգեբաններին և մանկավարժներին: Այստեղ դուք պետք է զգույշ լինեք.

## Համակարգչի բացասական ազդեցությունները

